



54 (238). ԻՐԵՔ ՄԱՐԳԱՐԻՏ

Նեճիրվան հավք մե բռնեց, շատ ուրիցցավ վըր հավքուն, հավք լեզու չեւավ, ըսեց.

— Նեճիրվա՛ն, զիսի թող, քու աղեկութենի տեղ իրեք հատ մարգըրիտ կածամ: Օր զիսի ծախիս, շատ-շատ էրկու-իրեք խուռուշ պտի չընկնա ձեռքդի:

Մարդն ավտըցավ, զհավք թողեց: Հավք թռավ վըր ծառին, բանձր տեղ մը կանավ: Նեճիրվան շատ բաքլեց, նա՛ մարգըրիտ, նա՛ բան, փոշմընավ վըր ուր էրածին, զձեռք շէրկնցուց, օր զհավք բռներ, ձեռք չը հասավ, հավք ծիծղաց, ըսեց.

— Էն տեղն օր ձեռքդի չը հասնի՝ մ՛երկնցու. էդ մեկ: Անլի-նեւու բանին մ՛ավտընա. էդ էրկու Յընցած-գացած բանի վրա մ՛ափսոսա. էդ իրեք: Ըշտե քըզի իրեք մարգըրիտ:

